

**Գրանցված է  
Նոր խմբագրությամբ**

Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկում

**Նախագահ՝ Արթուր Զավադյան**

---

« \_ » \_\_\_\_\_ 2011թ.

**ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ  
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ  
ԿԱՆՈՆՆԵՐ**

## **Գլուխ 1. Հասկացություններ**

- 1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) «**Բացման գին**». բացման աճուրդի և/կամ առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ ֆինանսական գործիքով կնքված առաջին գործարքի գինը:
- 3) «**Փակման գին**». առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ ֆինանսական գործիքով կնքված վերջին գործարքի գինը:
- 4) «**Առավելագույն գին**». տվյալ ֆինանսական գործիքով կնքված գործարքների ամենաբարձր գինը:
- 5) «**Նվազագույն գին**». տվյալ ֆինանսական գործիքով կնքված գործարքների ամենացածր գինը:
- 6) «**Գործարքի գին**». գործարքի առարկա ֆինանսական գործիքի մեկ միավորի գին կամ վարկի տարեկան տոկոսադրույք՝ վարկային ռեսուրսի դեպքում:
- 7) «**Գնման լավագույն գին**». տվյալ ֆինանսական գործիքի գնման հայտերում նշված ամենաբարձր գինը:
- 8) «**Վաճառքի լավագույն գին**». տվյալ ֆինանսական գործիքի վաճառքի հայտերում նշված ամենացածր գինը:
- 9) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Օպերատորի կանոններով սահմանված նշանակությունները:

## **Գլուխ 2. Օպերատորի կողմից բացահայտվող տեղեկատվությունը**

- 1) Առևտրի մասնակիցներին և հանրությանը տեղեկատվության բացահայտման գործընթացի պատշաճ կազմակերպման, տեղեկատվության թափանցիկության, հրապարակայնության և տեղեկությունից օգտվողների հավասարության սկզբունքի ապահովման համար Օպերատորն՝
  - ա) սույն կանոններին համապատասխան կազմակերպում է Օպերատորի կողմից տեղեկատվության բացահայտման գործընթացի իրականացումը,
  - բ) ապահովում է բացահայտվող տեղեկատվության հավաստիությունը,
  - գ) ապահովում է առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվության (այդ թվում՝ գործարքների կողմերի վերաբերյալ տեղեկատվության) տարանջատումը և դրա հրապարակման (տարածման) կանխարգելումը:

## **Գլուխ 3. Առևտրի մասնակիցներին տեղեկատվության բացահայտումը**

- 1) Առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է Օպերատորի կողմից կազմակերպվող առևտուրը սկսվելուց առաջ, նախաառևտրային, առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում և առևտրի ավարտից հետո:
- 2) Առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է առևտրային համակարգի միջոցով՝ էլեկտրոնային ձևով:

## **Գլուխ 4. Առևտրի մասնակիցներին տեղեկատվության բացահայտումը մինչև առևտուրը սկսվելը**

- 1) Օպերատորի կողմից կազմակերպվող առևտուրը սկսվելուց առաջ առևտրի մասնակիցներին տեղեկատվության տրամադրումը սկսվում է տվյալ առևտրային օրվա նախաառևտրային նստաշրջանի սկսման պահից 20 րոպե առաջ և ավարտվում է նախաառևտրային նստաշրջանի սկսման պահին:
- 2) Օպերատորի կողմից առևտրին թույլատրված ֆինանսական յուրաքանչյուր գործիքի առանձնահատկություններից ելնելով՝ նախաառևտրային նստաշրջանի սկսվելուց առաջ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի առևտրի մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը ներառում է՝
  - ա) Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի վերաբերյալ՝
    - (1) թողարկողի անվանումը՝ կորպորատիվ արժեթղթերի և պետական պարտատոմսերի դեպքում,

- (2) տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
  - (3) տարբերակիչ ծածկագիրը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում կամ գրանցման համարը՝ պետական պարտատոմսերի դեպքում,
  - (4) հարթակը կամ բորսայական ցուցակը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
  - (5) թողարկման և մարման ամսաթվերը՝ կորպորատիվ և պետական պարտատոմսերի դեպքում:
- բ) շուկայի մասնակիցների անվանումը, առևտրային կոդը, կապի միջոցները:
- գ) Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի գնանշումների վերաբերյալ՝
- (1) տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
  - (2) վերջին գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը, գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը, գործարքի կնքման ամսաթիվը և ժամը,
  - (3) վերջին գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գնի փոփոխությունը նախորդ գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գնի համեմատ,
  - (4) վերջին առևտրային նստաշրջանի փակման գինը,
  - (5) վերջին գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գնի փոփոխությունը վերջին առևտրային նստաշրջանի փակման գնի համեմատ:
- դ) առնվազն վերջին 5 օրվա ընթացքում (եթե Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ) ֆինանսական գործիքներով կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
- (1) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
  - (2) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը,
  - (3) գործարքի կնքման ամսաթիվը և ժամը,
  - (4) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը,
  - (5) ռեպո գործարքի հաստատման ամսաթիվը:
- ե) շուկայի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակիցներին բացահայտվող տեղեկատվությունը ներառում է առնվազն վերջին 5 օրվա ընթացքում (եթե Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ) ֆինանսական գործիքներով շուկայի տվյալ մասնակցի անունից կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
- (1) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
  - (2) գործարքի տեսակը (առք կամ վաճառք),
  - (3) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը,
  - (4) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը,
  - (5) գործարքի ընդհանուր գումարը,
  - (6) գործարքի հերթական տարբերակիչ համարը,
  - (7) գործարքի կնքման ամսաթիվը և ժամը:
- զ) առնվազն վերջին 5 օրվա ընթացքում (եթե Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ) շուկայի տվյալ մասնակցի անունից կնքված յուրաքանչյուր ռեպո գործարքի վերաբերյալ շուկայի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակիցներին բացահայտվող տեղեկատվությունը ի թիվս սույն գլխի 2) կետի ե) ենթակետի (1), (2), (6) և (7) կետերում նշված տեղեկությունների ներառում է նաև՝
- (1) ռեպո-ուղղակի գործարքի գումարը,
  - (2) ռեպո-հետադարձ գործարքի գումարը,
  - (3) ռեպո գործարքի հաստատման ամսաթիվը և ժամը:
- է) տվյալ նախաառևտրային նստաշրջանին նախորդող առնվազն 5 օրվա ընթացքում (եթե Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ) Օպերատորին հայտնի դարձած՝ թողարկողի և/կամ տվյալ ֆինանսական գործիքի վերաբերյալ Օպերատորի մոտ առկա տեղեկությունների բոլոր այն փոփոխությունները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ֆինանսական գործիքների գների ձևավորման վրա:
- ը) ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություն չհամարվող այլ տեղեկություններ:

**Գլուխ 5. Առևտրի մասնակիցներին տեղեկատվության բացահայտումը նախաառևտրային նստաշրջանի, բացման աճուրդի, առևտրային և հետ առևտրային նստաշրջանների ընթացքում**

- 1) Նախաառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է իրական ժամանակի ռեժիմում՝ նախաառևտրային նստաշրջանի սկսման պահից մինչև առևտրային նստաշրջանի բացման պահը:
- 2) Նախաառևտրային նստաշրջանի ընթացքում Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրի մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը, ի լրումն սույն կանոնների 4-րդ գլխի 2) կետում նշված տեղեկությունների, ներառում է՝
  - ա) տվյալ նախաառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված, սակայն դեռևս չբավարարված Հայտերի ցանկը և դրանց բավարարման էական պայմանները (հայտի բավարարման էական պայմանները համապատասխանում են Օպերատորի «Առևտրի ընդհանուր կանոններ»-ում առևտրի տարբեր եղանակների համար սահմանված հայտի բավարարման էական պայմաններին),
  - բ) Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի գնանշումների վերաբերյալ՝
    - (1) տվյալ նախաառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգ մուտքագրված գնման և վաճառքի լավագույն գները,
    - (2) տվյալ ֆինանսական գործիքի գնման և վաճառքի լուտերի ընդհանուր քանակը:
- 3) Առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է իրական ժամանակի ռեժիմում՝ առևտրային նստաշրջանի սկսման պահից մինչև առևտրային նստաշրջանի ավարտը:
- 4) Առևտրային նստաշրջանի ընթացքում ֆինանսական յուրաքանչյուր գործիքի առևտրի մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը, ի լրումն սույն կանոնների 4-րդ և 5-րդ գլուխների 2) կետում նշված տեղեկությունների, ներառում է՝
  - ա) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված, սակայն դեռևս չբավարարված Հայտերի ցանկը և դրանց բավարարման էական պայմանները (հայտի բավարարման էական պայմանները համապատասխանում են Օպերատորի «Առևտրի ընդհանուր կանոններ»-ում առևտրի տարբեր եղանակների համար սահմանված հայտի բավարարման էական պայմաններին),
  - բ) Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի գնանշումների վերաբերյալ՝
    - (1) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգ մուտքագրված գնման և վաճառքի լավագույն գները,
    - (2) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների առավելագույն և նվազագույն գները,
    - (3) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների առարկա տվյալ ֆինանսական գործիքի լուտերի քանակը,
    - (4) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգ մուտքագրված վաճառքի և գնման լավագույն գների տարբերությունը:
  - գ) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
    - (1) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
    - (2) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը,
    - (3) գործարքի կնքման ամսաթիվը և ժամը,
    - (4) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լուտերի քանակը,
    - (5) գործարքի հաստատման ամսաթիվը և ժամը՝ ռեպո գործարքի դեպքում:
  - դ) շուկայի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակիցների կողմից տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
    - (1) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
    - (2) գործարքի տեսակը (առք կամ վաճառք),
    - (3) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը,
    - (4) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լուտերի քանակը,

- (5) գործարքի ընդհանուր գումարը,
  - (6) գործարքի հերթական տարբերակիչ համարը,
  - (7) գործարքի կնքման ամսաթիվը և ժամը:
- ե) շուկայի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակիցների կողմից տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր ռեպո գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը ի թիվս սույն գլխի 4) կետի դ) ենթակետի (1), (2), (6) և (7) կետերում նշված տեղեկությունների ներառում է նաև՝
- (1) ռեպո-ուղղակի գործարքի գումարը,
  - (2) ռեպո-հետադարձ գործարքի գումարը,
  - (3) ռեպո գործարքի հաստատման ամսաթիվը և ժամը:
- զ) Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրի համար նախատեսված՝ շուկայի տվյալ մասնակցի կողմից իր և իր հաճախորդների համար դեպոնացված ֆինանսական գործիքների և դրամական միջոցների մնացորդների և դրանց փոփոխության վերաբերյալ:
- է) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում Օպերատորին հայտնի դարձած՝ թողարկողի և/կամ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի վերաբերյալ Օպերատորի մոտ առկա տեղեկությունների բոլոր այն փոփոխությունները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի գների ձևավորման վրա:
- ը) ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություն չհամարվող այլ տեղեկություններ:
- 5) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է իրական ժամանակի ռեժիմում՝ հետառևտրային նստաշրջանի սկսման պահից մինչև առևտրի ավարտը:
- 6) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում ֆինանսական յուրաքանչյուր գործիքի առևտրի մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը, ի լրումն սույն գլխի 4) կետում նշված տեղեկությունների ներառում է՝
- ա) տվյալ հետառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված, սակայն դեռևս չբավարարված Հայտերի ցանկը և դրանց բավարարման էական պայմանները (հայտի բավարարման էական պայմանները համապատասխանում են Օպերատորի «Առևտրի ընդհանուր կանոններ»-ում առևտրի տարբեր եղանակների համար սահմանված հայտի բավարարման էական պայմաններին),
  - զ) տվյալ հետառևտրային նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
    - (1) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
    - (2) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի միջին կշռված գինը,
    - (3) գործարքի կնքման ամսաթիվը և ժամը,
    - (4) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը:
- 7) Առևտրի ավարտից հետո առևտրի մասնակիցներին տրամադրվում է առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում սույն կանոններին համապատասխան նրանց հասանելի տեղեկատվությունը՝ առևտրային և հետառևտրային նստաշրջանների փակման դրությամբ:
- 8) Սույն կանոնների 4-րդ և 5-րդ գլուխներով սահմանված տեղեկատվությունը առևտրի մասնակիցներին տրամադրվում է անվճար:

## **Գլուխ 6. Հանրությանը տեղեկատվության բացահայտումը**

- 1) Հանրությանը տեղեկատվության բացահայտումն իրականացվում է Օպերատորի պաշտոնական ինտերնետային էջում՝ [www.nasdaqomx.am](http://www.nasdaqomx.am):
- 2) Հանրությանը տեղեկատվության բացահայտումը կարող է իրականացվել նաև հրապարակային էլեկտրոնային հաղորդակցության, տպագիր մամուլի և/կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, որոնց ցանկը սահմանվում է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ: Օպերատորի կողմից հանրությանը տեղեկատվության բացահայտման ձևը սահմանվում է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ:
- 3) Օպերատորի պաշտոնական ինտերնետային էջում հանրությանը տեղեկատվության

բացահայտումն իրականացվում է սույն գլխի 6) - 13) կետերին համապատասխան՝ ընթացիկ, օրական, ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:

- 4) Սույն գլխի 2) կետին համապատասխան ընդունված որոշմամբ հաստատված լրատվամիջոցներով հանրությանը տեղեկատվության բացահայտումը կարող է իրականացվել օրական, ամսական, եռամսյակային և/կամ տարեկան պարբերականությամբ:
- 5) Սույն գլխի 4) կետին համապատասխան օրական, ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ հանրությանը բացահայտվող տեղեկատվությունը պետք է ներառի միայն համապատասխան ժամանակաշրջանի համար սույն գլխի 8) - 13) կետերով սահմանված որոշակի տեղեկություններ, որոնց կազմը սահմանվում է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ:
- 6) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող ընթացիկ առևտրի վերաբերալ տեղեկատվությունը Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի համար ներառում է՝
  - ա) թողարկողի անվանումը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
  - բ) տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
  - գ) տարբերակիչ ծածկագիրը՝ կորպորատիվ պարտատոմսերի դեպքում կամ գրանցման համարը՝ պետական պարտատոմսերի դեպքում,
  - դ) հարթակը կամ բորսայական ցուցակը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
  - ե) տվյալ առևտրային նստաշրջանի բացման, նվազագույն, առավելագույն և միջին կշռված գները (պարտատոմսերի դեպքում՝ տարեկան եկամտաբերությունները),
  - զ) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների քանակը, գործարքների առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը և գործարքների ծավալը (արտահայտված ՀՀ դրամով),
  - է) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված վերջին գործարքի գինը, լոտերի քանակը և գործարքի ծավալը (արտահայտված ՀՀ դրամով),
  - ը) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված վերջին գործարքի գնի փոփոխությունը նախորդ առևտրային նստաշրջանի փակման գնի համեմատ (պարտատոմսերի դեպքում՝ տարեկան եկամտաբերության փոփոխությունը):
- 7) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող ընթացիկ առևտրի վերաբերալ տեղեկատվությունը ռեպո գործարքների վերաբերյալ ի թիվս սույն գլխի 6) կետի բ) ենթակետում նշված տեղեկության ներառում է նաև՝
  - ա) ռեպո-ուղղակի գործարքի գումարը,
  - բ) ռեպո-հետադարձ գործարքի գումարը,
  - գ) ռեպո-ուղղակի և ռեպո-հետադարձ գործարքների միջև առկա ժամանակահատվածը (օրերով),
  - դ) ռեպո տոկոսադրույքը (տարեկան),
  - ե) ռեպո գործարքի գործողության ժամկետի փոփոխության ամսաթիվը,
  - զ) ռեպո գործարքի գործողության ժամկետի փոփոխության ժամանակահատվածը (օրերով),
  - է) ռեպո փոփոխված տոկոսադրույքը (տարեկան),
  - ը) ռեպո գործարքի կնքման ամսաթիվը,
  - թ) ռեպո գործարքի մարման ամսաթիվը:
- 8) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող օրական տեղեկատվությունը Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի համար ներառում է՝
  - ա) թողարկողի անվանումը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
  - բ) տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
  - գ) տարբերակիչ ծածկագիրը՝ կորպորատիվ պարտատոմսերի դեպքում կամ գրանցման համարը՝ պետական պարտատոմսերի դեպքում,
  - դ) հարթակը կամ բորսայական ցուցակը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
  - ե) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում ձևավորված միջին կշռված գնի փոփոխությունը նախորդ առևտրային նստաշրջանի ընթացքում ձևավորված միջին կշռված գնի համեմատ (պարտատոմսերի դեպքում՝ միջին կշռված տարեկան եկամտաբերության փոփոխությունը),

- զ) տվյալ առևտրային նստաշրջանի բացման, փակման, նվազագույն, առավելագույն և միջին կշռված գները (պարտատոմսերի դեպքում՝ տարեկան եկամտաբերությունները),
- է) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգ մուտքագրված գնման և վաճառքի լավագույն գները (պարտատոմսերի դեպքում՝ տարեկան եկամտաբերությունները),
- ը) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների քանակը, գործարքների առարկա տվյալ ֆինանսական գործիքի լուտերի քանակը և գործարքների ծավալը (արտահայտված ՀՀ դրամով):
- 9) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող օրական տեղեկատվությունը ռեպո գործարքների վերաբերյալ ի թիվս սույն գլխի 8) կետի բ) ենթակետում նշված տեղեկության ներառում է նաև՝
- ա) ռեպո-ուղղակի գործարքի գումարը,
  - բ) ռեպո-հետադարձ գործարքի գումարը,
  - գ) ռեպո-ուղղակի և ռեպո-հետադարձ գործարքների միջև առկա ժամանակահատվածը (օրերով),
  - դ) ռեպո տոկոսադրույքը (տարեկան),
  - ե) ռեպո գործարքի գործողության ժամկետի փոփոխության ամսաթիվը,
  - զ) ռեպո գործարքի գործողության ժամկետի փոփոխության ժամանակահատվածը (օրերով),
  - է) ռեպո փոփոխված տոկոսադրույքը (տարեկան),
  - ը) ռեպո գործարքի կնքման ամսաթիվը,
  - թ) ռեպո գործարքի մարման ամսաթիվը:
- 10) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող ամսական, եռամսյակային և տարեկան տեղեկատվությունը Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի համար ներառում է՝
- ա) թողարկողի անվանումը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
  - բ) տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
  - գ) տարբերակիչ ծածկագիրը՝ կորպորատիվ պարտատոմսերի դեպքում կամ գրանցման համարը՝ պետական պարտատոմսերի դեպքում,
  - դ) հարթակը կամ բորսայական ցուցակը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
  - ե) տվյալ ժամանակահատվածի նվազագույն, առավելագույն և միջին կշռված գները (պարտատոմսերի դեպքում՝ տարեկան եկամտաբերությունները),
  - զ) տվյալ ժամանակահատվածում կնքված գործարքների քանակը, գործարքների առարկա տվյալ ֆինանսական գործիքի լուտերի քանակը և ընդհանուր ծավալը (արտահայտված ՀՀ դրամով),
  - է) տվյալ ժամանակահատվածում կնքված վերջին գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը և գործարքի կնքման ամսաթիվը (պարտատոմսերի դեպքում՝ տարեկան եկամտաբերությունը):
- 11) Օպերատորի կողմից ռեպո գործարքների վերաբերյալ հանրությանը բացահայտվող ամսական, եռամսյակային և/կամ տարեկան տեղեկատվությունը ի թիվս սույն գլխի 10) կետի բ) ենթակետում նշված տեղեկության ներառում է նաև՝
- ա) ռեպո-ուղղակի գործարքի գումարը,
  - բ) ռեպո-հետադարձ գործարքի գումարը,
  - գ) ռեպո-ուղղակի և ռեպո-հետադարձ գործարքների միջև առկա ժամանակահատվածը (օրերով),
  - դ) ռեպո տոկոսադրույքը (տարեկան),
  - ե) ռեպո գործարքի գործողության ժամկետի փոփոխության ամսաթիվը,
  - զ) ռեպո գործարքի գործողության ժամկետի փոփոխության ժամանակահատվածը (օրերով),
  - է) ռեպո փոփոխված տոկոսադրույքը (տարեկան),
  - ը) ռեպո գործարքի կնքման ամսաթիվը,
  - թ) ռեպո գործարքի մարման ամսաթիվը:
- 12) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող թողարկողի և թողարկողի բաժնետոմսերի վերաբերյալ տեղեկատվությունը, ներառում է՝
- ա) թողարկողի լրիվ և կրճատ ավանումը, հասցեն, ինտերնետային էջի հասցեն և կապի մջոցները,
  - բ) բաժնետոմսերի հապավումը, բաժնետոմսերի դասը, հարթակը կամ բորսայական ցուցակը և տարբերակիչ ծածկագիրը,

- գ) բաժնետոմսերի առևտրին թույլատրման ամսաթիվը, անվանական արժեքը (արտահայտված ՀՀ դրամով), թողարկման քանակը, թողարկման ծավալը (արտահայտված ՀՀ դրամով), շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի քանակը, շրջանառության մեջ գտնվող բաժնետոմսերի ծավալը (արտահայտված ՀՀ դրամով):
- 13) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող թողարկողի և թողարկողի կորպորատիվ պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվությունը ի թիվս սույն գլխի 12) կետում նշված տեղեկությունների ներառում է նաև՝
- ա) կորպորատիվ պարտատոմսերի թողարկման ամսաթիվը, տեղաբաշխման ավարտը, ժամկետայնությունը և մարման ամսաթիվը,
  - բ) կորպորատիվ պարտատոմսերի արժեկտրոնի եկամտաբերությունը, արժեկտրոնի վճարումների քանակը և արժեկտրոնի հաշվարկման ամսաթվերը:
- 14) Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ կարող է սահմանվել՝ ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություն չհամարվող այլ տեղեկություններ:
- 15) Ընթացիկ առևտրի վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվում է յուրաքանչյուր առևտրային նստաշրջանի ընթացքում իրական ժամանակի ռեժիմից առավելագույնը 30 րոպե (եթե Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ ավելի կարճ ժամկետ սահմանված չէ) ուշացումով՝ մինչև տվյալ առևտրային նստաշրջանի ավարտը:
- 16) Օրական տեղեկատվությունը բացահայտվում է յուրաքանչյուր առևտրային օրվա համար՝ մինչև տվյալ առևտրային օրվա ավարտը:
- 17) Ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ հանրությանը տեղեկատվության բացահայտումն իրականացվում է ոչ ուշ, քան տվյալ ժամանակահատվածի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը:

#### **Գլուխ 7. Տեղեկությունների գաղտնիության ապահովումը**

- 1) Շուկայի մասնակիցների կողմից կնքված գործարքների կողմերի, առևտրային համակարգ հայտեր մուտքագրած առևտրի մասնակիցների, ինչպես նաև գործարքների կնքման համար նախատեսված ֆինանսական գործիքների վերաբերյալ տեղեկությունները համարվում են գաղտնի:
- 2) Սույն գլխի 1) կետում նշված տեղեկատվությանը ծանոթանալու իրավունք ունեն Օպերատորի միայն այն աշխատակիցները, որոնք իրենց աշխատանքային պարտականությունների կատարման բերումով անմիջականորեն մասնակցում են նման տեղեկատվության մշակմանը:
- 3) Օպերատորի այլ աշխատակիցները և պաշտոնատար անձինք, բացառությամբ օրենքով և Օպերատորի այլ կանոններով սահմանված դեպքերի, իրավունք ունեն ծանոթանալու միայն սույն կանոններով սահմանված՝ հրապարակման ենթակա տեղեկատվությանը:

#### **Գլուխ 8. Կանոններում փոփոխությունները և լրացումները**

- 1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:

**Հաստատված է**  
**«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ**  
**դիտորդ խորհրդի որոշմամբ**

\_\_\_\_\_ **Արմեն Մելիքյան**

**«01» մարտի 2011թ.**  
**ք. Երևան**  
**ՀՖԲ-01/132Լ**